

Պարարտացում

Պետք է լինի հստակ տարբերակում մշակաբույսերի սննդարար նյութերի պահանջի և բիզնեսի պատշաճ կառավարման պահանջի միջև, ինչն օգտագործվում է եկամտաբերության հաշվարկի ժամանակ:

Քույսերի սննդարար նյութերի պահանջը (պարարտանյութերի առաջարկություն)

Նպատակը՝ Դաշտի համար պահանջվող պարարտանյութի քանակի հաշվարկ (որոշակի ժամանակահատվածի համար)

Հաշվարկ՝ Տվյալ բույսի կողմից սննդարար նյութերի կլանման արդյունավետության որոշում՝ ըստ բույսերի կողմից սննդանյութերի պահանջի և օգտագործման, հաշվի առնելով հողի մեջ առկա սննդանյութերը (օրինակ նախորդ դիտարկումներից), ինչպես նաև ջրի միջոցով սննդարար նյութերի հեռացման որոշում և սննդանյութերի գնահատում:

Սննդարար նյութերի պահանջը՝ բիզնեսի կառավարման տեսակետից

Նպատակը՝ Սննդանյութերի քանակ, որը պետք է հեռացվի հողից, որպեսզի բավանսավորվի պահանջվող սննդանյութերի քանակը տվյալ մշակաբույսի մշակության համար:

Հաշվարկը՝ Ըստ հետևյալ բանաձևի

Սննդանյութերի բաղադրությունը (օրինակ կգ N 1 ց հացահատիկի և/կամ ծղոտի համար)

x Բերքատվություն (օրինակ հացահատիկ և/կամ ծղոտ 1 հա/ց)

= սննդանյութերի հեռացումը (օրինակ կգ N 1 հեկտարի համար)

X Պահանջի գործակից (օրինակ 1.1` 10% լրացուցիչ սննդանյութեր, որպեսզի չլինեն կորուստներ, կլանման արդյունավետություն)

= Սննդանյութերի պահանջ (օրինակ կգ N 1 հեկտարի համար)

- Հողում մնացած բույսերի մնացորդներից սննդանյութերի հետվերադարձ (օրինակ 40 %)

= Սննդանյութերի բավանսավորված պահանջ (օրինակ կգ N 1 հեկտարի համար)

Սննդանյութերի բաղադրությունը/հեռացումը. մաքուր սննդանյութերի կիրգրամներ, որոնք պարունակվում են հավաքված բերքի որոշակի քանակում (ցենտների, տոննայի, հեկտարի հաշվով): Բիզնես հաշվարկների համար օգտակար է, որ լրացուցիչ բերքով (ծղոտ) հեռացող սննդանյութերի հաշվարկը կատարվի առանձին, որպեսզի հաշվարկվի ինչ է հեռացվել և ինչ է մնացել դաշտում հաջորդ մշակաբույսի համար: Ծղոտի և ցողունային մնացորդի սննդարար արժեքը կարող են վերցվել աղյուսակից:

Պահանջի գործոնը. Մշակաբույսերի սննդանյութերի պահանջը հաշվարկելիս հաշվի են առնվում որոշակի կիմայական և հողային պայմանները, ինչպես նաև մշակության համակարգը (հաշվի առնելով սննդանյութերի հեռացումը՝ անհրաժեշտ է արտադրել որոշակի քանակությամբ մշակաբույսեր):

Պահանջի գործակիցը հաշվի է առնում ազոտի կորուստը (կատարվում է ոռոգման, գոլորշիացման և այլնի միջոցով): Սովորաբար պահանջվում է օգտագործել ավելի շատ ազոտ քան հեռացման քանակն է հավաքված բերքից: Այս դեպքում ընդհանուր պահանջի գործոնը կարող է հաշվարկվել, հաշվի առնելով բույսերի հավանական բերքատվությունը:

P₂O₅ և K₂O պահանջը հավասար է բույսերի կողմից վերցված քանակին:

N-ի պահանջը գյուղատնտեսական մշակաբույսերի համար, հաշվի առնելով մթնոլորտային տեղումները և հողի անալիզները

Հողի գնահատում	Մթնոլորտային տեղումներ մմ/տարի		
	<650	650-750	>750
<45	1.2	1.3	1.3
45-65	1.2	1.2	1.3
66-85	1.1	1.2	1.2
>85	1.1	1.1	1.2

Աղբյուրը. Ըստ Միջին Ֆրանկոնիայի տվյալների

Սննդանյութերի պահանջ. Սա սննդանյութերի անհրաժեշտ քանակն է՝ մաքուր սննդանյութի (օրգանական կամ հանքային) 1 կգ-ի հաշվով, որը պետք է տալ հողին, որպեսզի ապահովվի հատիկի որոշակի քանակի կայուն արտադրություն՝ հողակլիմայական որոշակի պայմաններում: Պահանջվող սննդանյութերի կապը զանգվածի որոշակի միավորի համար հնարավոր է միայն որոշակի բերքատվության դեպքում: Այն պետք է հաշվարկվի ակնկալվող եկամտաբերության հիման վրա, քանի որ եթե օպտիմալ քանակը գերազանցվի, ապա կկիրառվի Նվազող վերադարձի օրենքը:

Սննդանյութերի վերադարձ. Հասանելի սննդանյութերն են (համարժեք հանքային պարարտանյութերին) նախորդ մշակաբույսերից, որոնք պետք է հաշվի առնվեն հաշվարկում, ինչպես նաև հասանելի ազոտը հատիկավորներից, եթե աճեցվել են: Հասանելի սննդանյութերը կարող են օգտագործվել հաջորդ կուլտուրաների կողմից: Դրանք այն արդյունքն են, ինչը թույլ է տալիս կրճատել մշակաբույսերի համար պահանջվող սննդանյութերի քանակը:

Քանի որ բալանսավորված սննդանյութերի պահանջը չափվում է մաքուր սննդանյութերի կիրառումով՝ ծախսերի հաշվարկը պետք է հիմնվի մաքուր սննդանյութերի կիրառման արժեքի վրա: Օրգանական գոմաղբը հաշվարկում դիտարկվում է որպես հանքային պարարտանյութ, որը ճիշտ է, եթե արտադրված գոմաղբում պարունակվող սննդարար նյութերը գնահատվում են նույն գներով՝ մաքուր սննդանյութի 1 կիրառման հաշվով՝ որպես արդյունք:

Հատիկավոր մշակաբույսերի համար ազոտի գործակիցը ընդունվում է 0: Սա հիմնված է այն հատկության վրա, որ դրանք օդի ազոտ գազը վերածում են բույսի համար մատչելի ձևի: Այդ պատճառով նրանք կարիք չունեն ազոտական պարարտանյութերի և դեռ կթողնեն ազոտ հողի մեջ: Գործնական տեսանկյունից հողի որակի լավացման համար նախատեսված պարարտացման ծախսերը պետք է ընդգրկվեն ընդհանուր վերադիր ծախսերում, քանի որ դրանք կապված չեն կոնկրետ մշակաբույսի հետ: